ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

26.05.2022թ.

Համալսարանում գործող որակի ներքին ապահովման համակարգը հավակնում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների մշտադիտարկման միջոցով ապահովել կրթական ծրագրի շարունակական բարելավումը: Այս առումով 2021-2022 ուստարում ԱԲՀ-ում գործող հարցումների անցկացման կանոնակարգի համաձայն առցանց հարցում է անցկացվել համալսարանի 2-6–րդ կուրսերի ուսանողների շրջանում: Հարցմանը մասնակցել են այդ կուրսերում սովորող 399 ուսանողներից 204-ը /51 տոկոսը/:

Հարցման նպատակներն են՝

1) Բացահայտել բուհում առկա կրթական ռեսուրսներից, տեղեկատվական համակարգից, օժանդակ ծառայություններից, ստորաբաժանումների աշխատանքներից ուսանողների բավարարվածության աստիճանը:
2) Հետազոտության արդյունքների ուսումնասիրության միջոցով իրականացնել բուհի գործունեության մշտադիտարկումներ:
3) Օբյեկտիվ տվյալների ամբողջականության ապահովմամբ ստեղծել հիմքեր ՈԱ գործընթացների արդյունավետության գնահատման, ինչպես նաև հիմնավորված կառավարչական որոշումների կայացման համար:

Հարցման գործընթացի կազմակերպումը

Ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսներից և տրամադրվող ծառայություններից ուսանողների բավարարվածության հարցումներն անցկացվել են առցանց՝ Google Forms ծրագրով: Հարցումը կազմակերպվել է 2-րդ կիսամյակի ընթացքում: Հարցաշարը լրացվել է անանունության սկզբունքով:

1. Սոցիալ-ժողովրդագրական հարցեր

1.1. Նշեք Ձեր սեռը



1.2. Նշեք Ձեր տարիքը



1.3. Նշեք Ձեր ֆակուլտետը



1.4. Ո՞ր կուրսում եք սովորում



Ինչպես երևում է գծապատկերից, հարցմանը մասնակցածների թիվը մեծ է հատկապես 5-րդ կուրսի ուսանողների շրջանում (նշենք, որ համալսարանի 4-րդ և 5-րդ կուրսերում էլ հենց ուսանողների թիվը մեծ է):

2. Բավարարվածությունը առկա ռեսուրսներից

2.1. Օգտվու՞մ եք ԱԲՀ-ի գրադարանից



2.2. Որքա՞ն հաճախ եք օգտվում գրադարանից



2.3. Գրադարանում առկա գրքերը և էլեկտրոնային գրականությունը բավականացնու՞մ են դասընթացներին պատրաստվելիս.



Ինչպես երևում է գրադարանի վերաբերյալ հարցման պատասխաններից, հարցված ուսանողների մեծամասնությունը գրադարանից օգտվում է հիմնականում քննություններին

նախապատրաստվելիս: Չնայած նրան, որ վերջին երկու տարում հատկապես գրադարանային ֆոնդի համալրման ուղղությամբ գործուն քայլեր են արվել համալսարանում, այնուամենայնիվ մասնագիտական գրականության հասանելիության վերաբերյալ հարցի պատասխաններն այդքան էլ գոհացուցիչ չեն:

Կարևորելով ուսանողների շրջանում էլ. գրքերի նկատելի պահանջարկը և, հաշվի առնելով համացանցում մուտքավճարների պատճառով դրանց անհասանելիությունը, համալսարանը սկսել է անդամակցել «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը, որի շնորհիվ հնարավորություն է ստացել օգտվել էլեկտրոնային ռեսուրսների լայն տեսականուց: Բացի այդ, Ավանդական բժշկության համալսարանը՝ որպես «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի» անդամ-կազմակերպություն, ձեռք է բերել Polpred.com Media Review լրատվական էլեկտրոնային շտեմարանի անվճար մուտք:

Հատկապես վերջին տարբերակի ընտրությունը՝ «*ընդհանրապես չի բավարարում*», որն ընտրել է հարցման մասնակիցների 37 %-ը, իրականությանը չի համապատասխանում, քանի որ դասախոսներն իրենց առարկայական ծրագրերի գրականությունը կազմելիս հաշվի են առնում նաև գրադարանում այդ գրքերի առկայությունը կամ ապահովում դրանց էլեկտրոնային տարբերակների հասանելիությունն ուսանողներին:

Անհրաժեշտություն է առաջանում այս հարցը քննարկել դասախոսների հետ, ինչպես նաև հանդիպում կազմակերպել ուսանողների հետ՝ պարզելու, թե որ դասընթացներից հանձնարարվող գրականությունն առկա չէ գրադարանում և շտկել խնդիրը:

2.4. Գրադարանն ապահովո՞ւմ է Ձեզ անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ.



Հարցվածների 34,6 տոկոսն ընտրել է պատասխանի «Ոչ» տարբերակը, որը լուրջ քննարկման առիթ է ստեղծում, քանի որ յուրաքանչյուր դասախոս հոգ է տանում իր առարկայի շրջանակում մատուցվող նյութերի, տրամադրվող հանձնարարությունների համար: Անհրաժեշտություն կա ուսանողների և դասախոսների շրջանում լրացուցիչ պարզաբանումներ անել՝ կոնկրետ գրադարանում բացակայող մասնագիտական գրականության առումով: Ամեն դեպքում, հարկ ենք համարում ավելացնել, որ այսօր մասնագիտական գրականություն ձեռք բերելը մեծ խնդիր չէ:

2.5. Հագեցա՞ծ է ընթերցասրահը ինտերնետ հասանելիությամբ համակարգիչներով



Այս հարցադրման վերաբերյալ մեր գրադարանավարը ներկայացրել է իր տեսակետն այն մասին, որ գրադարանի համակարգիչները մշտապես ունեցել են ինտերնետ հասանելիություն, և ուսանողներն իրեն դիմել են WiFi գոտու հասանելիության հարցով, քանի որ ցանկացել են իրենց տեխնիկաներով աշխատել ընթերցասրահում: Գուցե նրանք հենց դա են նկատի ունեցել պատասխանի «Ոչ» տարբերակն ընտրելիս:

2.6. Համակարգիչների քանակը բավականացնում է ընթերցասրահից օգտվողներին.



Հարցման մասնակիցների մի մասի կարծիքով համակարգիչների քանակը չի բավականացնում գրադարանից օգտվողներին: Սա նաև վկայում է այն մասին, որ ընթերցասրահից օգտվողները քիչ չեն:

2.7. Գո՞հ եք արդյոք



2.8. Բավարարվածությունը լսարաններից



«*Մշտապես ապահովված եք լսարաններով», «Լսարանի լուսավորվածությունը բավարարում է ձեզ», «Լսարանի ջերմությունը բավարարում է ձեզ»* հարցադրումներին հարցված ուսանողների մեծամասնությունը դրական է պատասխանել:

Նշված հարցադրումներից պատասխանի «Ոչ» տարբերակի մեծ ցուցանիշը վերաբերում է լսարանների ջերմությանը: Համեմատաբար ցածր ցուցանիշ է լսարանի լուսավորության վերաբերյալ տրված հարցվածների 15,4 %-ի պատասխանը, որը կարծում ենք վերաբերում է ոչ թե թույլ լուսավորությանը, այլ ինչպես հաջորդ բաց հարցից կռահեցինք՝ ամռանը լսարանների չափից շատ արևոտ ու լուսավոր լինելուն:

2.8. Ինչպիսի՞ փոփոխություններ կիրականացնեիք լսարաններում հարցին ունենք հետևյալ պատասխանները՝

Ոչ մի փոփոխություն-3 ուսանող
Չգիտեմ, դժվարանում եմ պատասխանել-2 ուսանող
Օդորակիչներ ամռանը, դժվար է շոգին կենտրոնացնել ուշադրությունը-57 ուսանող
Արևոտ օրերին վարագույրներ պետք է լինեն -8 ուսանող
Պրոյեկտոր -3 ուսանող
Աղբաման-3 ուսանող
Աշխատանքային մարկերներ- 5 ուսանող
Միջանցքներում նստատեղերի ավելացում-2 ուսանող
Դասասենյակները հիանալի կահավորված են-1 ուսանող
Այն ամենը, ինչ մեզ անհրաժեշտ է լսարանում, հիմնականում հասանելի է -1 ուսանող
Դասասենյակները լինեն ավելի մեծ -5 ուսանող
Ամեն ինչ լավ է-3 ուսանող
Wifi գոտիներ-3 ուսանող
Նոր գրքեր-1 ուսանող
Հին համակարգիչները փոխարինել նորերով-2 ուսանող

Ինչպես երևում է այս հարցի պատասխաններից, ուսանողների մեծամասնությունը ցանկանում է լսարաններում տեղադրվեն օդորակիչներ, քանի որ շոգ եղանակին դժվար է լսարաններում դասերին մասնակցելը, դասերն անցկացվեն ավելի մեծ լսարաններում, լինեն պրոյեկտորներ ավելի մեծ տեսանելիություն ապահովելու համար, ինչպես նաև աղբամաններ, մարկերներ՝ բոլոր լսարաններում:

2.9. Բավարարվածությունը մասնագիտական կաբինետներից և լաբորատորիաներից



Այս հարցադրմանը մի փոքր լիարժեք չի եղել պատասխանել տեխնիկական խնդրի պատճառով. նշվել է պատասխանի նաև «Այլ» տարբերակը, սակայն տող չի հատկացվել կարծիք հայտնելու համար:

«Գործնական պարապմունքների համար անհրաժեշտություն ունենում եք օգտվել լաբորատորիաներից» հարցադրմանը հարցվածների մեծամասնությունը պատասխանել է «Այո», իսկ 19,5 %-ը՝ «Ոչ»: Այսինքն, կախված առարկայից և թեմայից ուսանողները հնարավորություն ունենում են օգտվել լաբորատորիաներից:

«Ձեզ բավարարում են լաբորատորիայում առկա սարքավորումները» հարցին հարցվածների 28 %-ն է դրական պատասխանել, 43,8 %-ը կարծում է, որ չեն բավարարում:

«Արդյոք լաբորատորիայում կատարվող աշխատանքներն ամրապնդում են ձեր տեսական գիտելիքները» հարցին հարցված ուսանողների 40,9 % -ն է դրական պատասխանել, 34,3 %-ը բացասական պատասխան է տվել: Անհրաժեշտություն է առաջանում այս հարցին ավելի հանգամանորեն անդրադառնալ:

«Օգտվում եք մասնագիտական կաբինետներից» հարցին հարցվածների 19,5 %-ն է դրական պատասխանել, մեծամասնությունը՝ 56,2 %-ն ընտրել է պատասխանի «Ոչ» տարբերակը:
Հաջորդ՝ *«Մասնագիտական կաբինետների սարքավորումները թույլ տալի՞ս են լիարժեք կերպով կազմակերպել ձեր գործնական պարապմունքները»* հարցին հարցվածների 29 %-ը պատասխանել է «Այո» այն դեպքում, երբ այդ կաբինետներից օգտվողների թիվը նախորդ հարցի պատասխանում ավելի ցածր է:

«Գործնական պարապմունքներ անցկացնելու համար դուք ապահովված եք համապատասխան սարքավորումներով» հարցին հարցվածների 35 %-ը պատասխանել է «Այո», նույնքանը՝ «Ոչ»:

2.10. Գնահատեք՝



Համալսարանի ընդհանուր սանիտարահիգիենիկ և սանհանգույցների վիճակը գերազանց և լավ է գնահատվել հարցվածների ավելի քան 41 %-ը, 23,6 %-ը՝ բավարար, 23%-ն էլ՝ անբավարար: Նշենք, որ պատասխանի անբավարար տարբերակի ընտրությունը ցածր տոկոս չի կազմում, հետևաբար կա խնդրին առավել մեծ ուշադրություն դարձնելու կարիք:

Համալսարանի ջեռուցումը գնահատել է «Գերազանց» և «Լավ» հարցվածների 50 %-ից ավելին, սակայն 14,8 % հարցվածների կողմից գնահատվել է անբավարար:

Ամենից շատ անբավարար են գնահատվել Wifi գոտիները:

2.11. Ինչպե՞ս կարող եք Ձեր դժգոհությունները, առաջարկություններն արտահայտել Համալսարանի տրամադրած ռեսուրսների վերաբերյալ (նշել հնարավոր բոլոր տարբերակները)

Ինչպես տեսնում ենք հարցման արդյունքից, ուսանողներն իրենց հուզող հարցերով, առաջարկություններով դիմել են ավելի շատ դեկանին: Այստեղ ևս ունենք տեխնիկական խնդիր, պատասխանի այլ տարբերակից չի երևում, թե ուսանողները բացի դեկանից, դասախոսներից, ամբիոնի վարիչից, ուսումնական մասի վարիչից էլ ում են դիմել: Շատ հաճախ նրանք տարաբնույթ հարցերով դիմում են նաև Արտաքին կապերի բաժնի աշխատակիցներին, կուրսի խորհրդատուներին:

3. Բավարարվածությունը տրամադրվող տեղեկատվությունից

3.1. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն Ձեր իրավունքների և պարտականությունների մասին.



3.2. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը.



Ուսանողներին տրամադրվել է տեղեկատվություն իրենց իրավունքների ու պարտա-կանությունների մասին ուսխորհրդի, դասախոսների, ուսումնական մասի վարիչի, կուրսի խորհրդատուների, դեկանի կողմից, սակայն հիմնականում տեղեկատվությունը տրամադրվել է դեկանի կողմից, որը հաճախակի է հանդիպումներ ունենում նրանց հետ:

3.3. Արդյոք տրամադրվել է տեղեկատվություն՝



Տեղեկատվության տրամադրումը վերոնշված բոլոր հարցերի վերաբերյալ փաստում են հարցված ուսանողների 50 տոկոսից ավելին, իհարկե քիչ չէ թիվը այն ուսանողների, որոնք նշում են, որ չի տրամադրվել կամ մասամբ է տրամադրվել:

3.4. Ու՞մ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը



3.5. Խորհրդատվություն ստանալու նպատակով հիմնականում ո՞ւմ եք դիմում.



3.6. Դուք բավարարվա՞ծ եք համալսարանական միջավայրում առկա ակադեմիական ազնվության մակարդակից



Հարցման արդյունքների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար, կարծում ենք, կիսամյակից կիսամյակ պետք է կազմակերպվեն ակադեմիական ազնվության պահպանման թեմայով քննարկումներ:

3.7. Ձեզ դասավանդող դասախոսներն ուսանողներին տրամադրու՞մ են տեղեկություններ իրենց գիտական նվաճումների վերաբերյալ (օրինակ, իրենց դասավանդած առարկայի շրջանակում ներկայացնում են իրենց կատարած գիտական նորարարությունները, քննարկում իրենց գիտական հոդվածները, մենագրությունները):



Այս հարցը պետք է լինի մեր պրոֆեսորադասախոսական կազմի և գիտական մասի ուշադրության կենտրոնում:

3.8. Ինչպե՞ս եք տեղեկանում Համալսարանի գործունեության կամ ձեռքբերումների մասին:



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, ուսանողներն օգտվում են տեղեկատվության տարածման բոլոր աղբյուրներից, սակայն Facebook սոցիալական ցանցից՝ ավելի շատ:

3.9. Տեղյա՞կ եք, թե ուսանողներն ինչպես կարող են մասնակցել համալսարանի կառավարմանը:



3.10. Ուսանողների կարծիքը հաշվի առնվո՞ւմ է համալսարանում որոշումներ կայացնելիս:



4. <u>Բավարարվածությունը ԱԲՀ-ի պաշտոնական կայքից, ֆեյսբուքյան էջից</u>

4.1. Հաճա՞խ եք օգտվում ԱԲՀ-ի էլ. կայքից:



4.2. Գնահատեք՝



4.3. Հաճա՞խ եք օգտվում ԱԲՀ-ի ֆեյսբուքյան էջից



4.4. Գնահատեք Ձեր բավարարվածությունը տեղեկատվության լիարժեքությունից



4.5. Գնահատեք ձեր գոհունակությունը նորությունների լուսաբանումից



Անհրաժեշտ է մեծացնել ուսանողների հետաքրքրվածությունը ԱԲՀ-ի պաշտոնական կայքի նկատմամբ՝ ուսանողներին հասանելի դարձնելով արդեն իսկ մշակված անգլալեզու նյութերը:

5. <u>Բավարարվածությունը վարչական ստորաբաժանումների աշխատանքից</u>

5.1. Գնահատեք համալսարանի վարչական ստորաբաժանումների և կառույցների գործունեությունը.



Հարցված ուսանողների գոհունակությունը բարձր է վարչական ստորաբաժանումների աշխատանքից. 50 տոկոսից ավելին գնահատել են «Գերազանց» և «Լավ»: «Գերազանց»

գնահատականը բարձր է հատկապես դեկանատի և արտաքին կապերի բաժնի վերաբերյալ պատասխաններում:

Հետևություններ

Ուսումնական գործընթացում ներդրված ռեսուրսների և համալսարանի կողմից տրամադրվող ծառայություններից բավարարվածության հարցումները թույլ տվեցին գալ հետևյալ եզրահանգման՝

1. Ընդհանուր առմամբ ուսանողների զգալի մասը գոհ է համալսարանում առկա ռեսուրսներից, սակայն հարկ ենք համարում առանձնացնել համալսարանի գրադարանում առկա մասնագիտական գրականության վերանայման և առարկայական ծրագրերին համապատասխանության հարցը: Անհրաժեշտություն կա նաև լսարաններում, լաբորատորիայում որոշ նյութատեխնիկական բարելավումների իրականացման:
2. Հարցվածների մեծամասնությունը բավարարված է տեղեկատվության տրամադրումից իրենց իրավունքների և պարտականությունների, գնահատման համակարգի և ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ:
3. ԱԲՀ-ի ուսումնական ծրագրերին վերաբերող հիմնական տեղեկատվությունը և փաստաթղթերը հասանելի են անգլերենով և տեղադրված են ԱԲՀ-ի պաշտոնական կայքում: Հարցվածների մեծամասնությունը բավարարված է ԱԲՀ-ի պաշտոնական կայքից, Ֆեյսբուք սոցիալական էջից նույնպես, սակայն կա կայքի նկատմամբ ուսանողների հետաքրքրությունը մեծացնելու անհրաժեշտություն:

Առաջարկություններ

1. Բարելավել բուհի պաշտոնական վեբ կայքի տեղեկատվությունը:
2. Ապահովել շարունակական հետադարձ կապ հարցման մասնակիցների հետ:
3. Հանձնարարել դասախոսներին ստուգել իրենց առարկայից մասնագիտական գրականության առկայությունն ու հասանելիությունը գրադարանում, ինչպես նաև ուսանողներին տեղյակ պահել այդ մասին:
4. Հնարավորության սահմաններում գրադարանի աշխատանքային ժամերում փոփոխություն կատարել և առկա գրականությունն օրվա ընթացքում ավելի երկարատև հասանելի դարձնել ուսանողներին:
5. Հանձնարարել դեկանին և կուրսի խորհրդատուներին կազմակերպել ակադեմիական ազնվության պահպանման թեմայով քննարկումներ բոլոր կուրսերի ուսանողների հետ կիսամյակի ընթացքում առնվազն մեկ անգամ:
6. Բարելավել կրթական միջավայրը՝ լսարաններում տեղադրելով պրոեկտորներ, օդորակիչներ,ստեղծել հանգստի անկյուններ, թարմացնել նյութատեխնիկական ռեսուրսները, ձեռք բերել մի քանի ժամանակակից և հզոր մանրադիտակներ:
7. Ըստ հարցման արդյունքների՝ համապատասխան ստորաբաժանումների հետ մշակել բարելավման միջոցառումների պլաններ:

8. Վերանայել հարցաշարը՝ իրականացնել տեխնիկական և որոշ բովանդակային փոփոխություններ.
   - ✓ վերանայել 5-րդ բաժնի հարցերը՝ ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ ավելի օբյեկտիվ տեղեկատվություն ապահովելու նպատակով:
   - ✓ ավելացնել բաց հարցերը, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան կարծիք հայտնել, առաջարկություններ անել, հարցերի պատասխանների տարբերակներում ավելացնել «*դժվարանում եմ պատասխանել*» պատասխանի նաև այս տարբերակը:

ՈԱ առաջատար մասնագետ՝ **Մ.Հովսեփյան**